№ 7 ՇԱԲԱԹ ՅՈՒՆՎԱՐԻ 13 — 1901 — ՇԱԲԱԹ ՅՈՒՆՎԱՐԻ 13 № 7

ՔՍԱՆԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվան 6 ռուբ.
Առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, Редакція «Мшакъ».
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տէլէֆօն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ (բացի կիրակի եւ տօն օրերից).

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր բառին 2 կոպէկ.
Տէլէֆօն № 253.

Սրանով յարգոյաբար հրաւիրվում են Շամախու թեմի վիճակաւոր առաջնորդ՝ Նորոգ հանգուցեալ

ՏԷՐ ԵՍԱՅԻ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԱՍՏՈՒԱԾԱՏՐԵԱՆՑԻ

ազգականները, բարեկամները եւ ծանօթները հանգուցեալի թաղմանը։ Հանգուցեալի մարմնի փոխադրութիւնը կը լինի ամսոյս 13-ին, առաջիկայ շաբաթ օրը, ժամի 3-ին ճաշից յետոյ, Վանքի աւագ եկեղեցու գաւթից ս. Նշան եկեղեցի, իսկ թաղումը կը լինի հետեւեալ օրը Վանքի աւագ եկեղեցու գաւթում։ Ս. Պատարագը կը սկսվի 9½ ժամին. ամբիծք՝ երեկոները 5½ ժամին։

1—2 Գործակալ ա. մ. Զաքարիա քահանայ Զարդեղեանց

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Զինուորական եւ արդիւնաբերական պետութիւններ.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Դատաստանական դահլիճից. Վրաց թատրոն. Նամակ Սամարկանդից. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ.—Էդուարդ VII թագաւոր Անգլիայի. Արտաքին լուրեր.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ. — ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ. — ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Թրազէաս.

ԶԻՆԻՈՐԱԿԱՆ ԵՒ ԱՐԴԻՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՊԵՏՈՒԹԻՒՆՆԵՐ

—

Անգլիան իր ձեռքն է դցել ամենամեծ հարստութիւններ և տիրում է աշխարհի վաճառականների մի նշանաւոր մասին։ Ամէրիկայի Միացեալ-Նահանգները այնպիսի մեծ քայլերով բարձրացնում և ճոխացնում են իրանց արդիւնաբերութիւնը, որ եւրոպացիները արդէն սկսել են վտանգ տեսնել իրանց համար այդ նոր մրցակցի ոյժից. Գերմանիան սկսել է նուաճել վաճառականները և իր արդիւնաբերութեամբ ոչ միայն հաւասարվել է առաջնակարգ պետութիւններին, այլ և յոյս ունի գերազանցել նրանց։ Մի փոքրիկ Բելգիա իր զարգացած արհեստագիտութեամբ այնքան նիւթական հարստութիւն և ոյժ է ձեռք բերել, որ իր ձեռնարկութիւններով և դիւնաբերութեան զարգացման համար աւելի նպաստաւոր պայմաններ ստեղծել։

Անգլիան ամենից վաղ հասկացել էր արդիւնագործութեան զարգացման լայն նշանակութիւնը և դեռ տասնութերորդ դարից սկսած անընդհատ առաջ էր գընում այդ ուղղութեամբ։ Արտասահմանում անուանում էին Անգլիան վաճառականների երկիր, արդիւնագործների և գործարանատէրերի երկիր, ցանկանալով այր դցել նրա քաղաքական և հասարակական նշանակութիւնը։ Մի քանի ժամանակից յետոյ նոյն ուղղութեան սկսեցին հետեւել և ուրիշ պետութիւններ։ Ֆրանսիայում նոյնպէս շատ վաղուց հասկացել էին արդիւնաբերութեան զարգացման նշանակութիւնը և Կոլբերի ծրագրած քաղաքականութիւնը պէտք է դնէր Ֆրանսիան այն ճանապարհի վրա, որի վրա կանգնած էր Անգլիան, բայց մի շարք դէպքեր և Նապոլէոն I-ի նուաճողական մրրկալից արշաւանքները ղղեցրին Ֆրանսիական ազգը, որը հանդէս եկաւ, իբրև զինուորական մի պետութիւն և յետոյ, նոր դժբաղդութիւնների շնորհիւ, ստիպված եղաւ առանձին ուշք դարձնել իր զինուորական ոյժի պահպանութեան և զարգացման վրա։

Նոյն իսկ միլիտարիզմը, զինուորական պատրաստ կազմակերպութեան մշտական գոյութիւնը ձգտում են ներկայումս պաշտպան հանդիսանալ գլխաւորապէս արդիւնագործութեան և առևտրի պահանջներին։ Իւրաքանչիւր ազգ ձգտում է այդ ասպարէզում ազդեցիկ դիրք ձեռք բերել և ապահովել իր ապագան։

Անկասկած, մխիթարական է, որ զինուորը կամաց կամաց դառնում է ժողովրդական արդիւնաբերութեան պաշտպան և նա դէպի պատերազմի դաշտ է գնում իր հայրենիքի բարեկեցութիւնը պաշտպանելու նպատակով։ Բայց աւելի ևս մխիթարական կը լինէր, եթէ զինուորը դառնար արդիւնաբերութեան մշակներից մէկը, իսկ միջազգային յարաբերութիւնները կանոնաւորվէին ընդհանուր, բոլոր ազգերի համար պարտաւորիչ, սկզբունքներով։ Ե՞րբ կարող է այդ իրագործվել։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԴԱՏԱՍՏԱՆԱԿԱՆ ԴԱՀԼԻՃԻՑ

(Շարունակութիւն)

Մեղադրութեան գլխաւոր վկաներից՝ Լունինա դէպքից միայն երկու շաբաթ առաջ է աղախնութեան մտած եղել Վարդապետեանների մօտ։ Քննիչի մօտ ցուցմունք տալիս, նա յայտնել էր, թէ բժ. Վարդապետեանի 16 տարեկան քոյրը եղբօր անունից արդելել էր իրան որ եւ է նամակ կամ հեռագիր ընդունել իր հարսից պօստը կամ հեռագրատուն տանելու համար, թէ տիկին Վարդապետեանին թոյլ չէին տալիս հացի նստել բոլորի հետ, իսկ եթէ նստում էր՝ ոչինչ չէին տալիս ուտելու, թէ ինքը տեսել է կապտած տեղեր տիկին Վարդապետեանի կռանը եւ երեսին, թէ տիկին Վարդապետեան երկիւղ էր յայտնում իրան, որ մի գուցէ մարդը իրան սպանէ։ Սակայն Լունինա, գործը նահանգական դատարանում քննվելիս, ներկայացել է նիստին, յայտնել է, որ ինքը ծանուցագիր չէ ստացել, բայց, պատահմամբ իմանալով, որ այդ օրը քննվում է բժ. Վարդապետեանի գործը, իր պարտքն է համարել գալ եւ խոստովանել, որ ինքը ուղիղ չէ վկայել քննիչի մօտ, որովհետեւ այն ժամանակ գրգռված է եղել բժ. Վարդապետեանի դէմ. կապտած տեղ ինքը երբէք չէ տեսել տիկին Վարդապետեանի երեսին, նա երբէք չէ ասել, թէ մարդը կարող է սպանել իրան եւ միայն երկու անգամ է պատահել, որ նա ճաշի նստած ժամանակ ոչինչ չէ կերել, բայց այդ անգամներն էլ ամուսնու հեռանալուց յետոյ ճաշել է ինչպէս պէտք է։

Միւս գլխաւոր վկան, խոհարարուհի Դէմիդովա, ընդհակառակը, խոստացրել է իր ցուցմունքը նահանգական դատարանում, ասելով, որ քննիչի մօտ ինքը խնայում էր բժ. Վարդապետեանին։ Նա ասում է, թէ բժ. Վարդապետեանը ամենից վաղ առաւօտեան 7 ժամին գնում է գործարան, ճաշի ժամանակ տանից դուրս չի գալիս, ուտում է տանը, ինքը ինչպէս գիտէ, ոչ մի գրգռիչ խմիչք չի խմում, ոչ մի գինի չի խմում, ոչ մի գարեջուր չի խմում, ոչ մի ուրիշ գրգռիչ խմիչք չի խմում։ Ինքը ոչ մի անգամ չէ տեսել, որ նա գրգռված լինի, ինքը ոչ մի անգամ չէ տեսել, որ նա ինչ-որ բան գրի։

դապետեանին եւ վախենում էր կորցնել իր տեղը, բայց նիստի նախընթաց օրը բժիշկը արձակել է իրան, ուստի եւ ինքը կարող է այժմ ճշմարտաբար վկայել։

Երկու վկաներն էլ միաբերան պնդում են, որ հանդուցեալ տիկին Վարդապետեան չատ բարի ու համակրելի ընաւորութեան տէր էր։

Գործի մէջ կար մի մութ կէտ, որ չը պարզվեց։ Տիկին Վարդապետեան մօրը ուղարկած գաղտնի նամակներից մէկում գրում է. «սա (բժ. Վարդապետեան) կարծում է, թէ չատ հեշտ բան է մարդ սպանելը, եւ ձեզ ժամանակամիջոց է նշանակել»։ Առաջ ենթադրելիս են եղել, թէ այդ կտորը բացատրվում է նրանով, որ բժ. Վարդապետեան պահանջելիս է եղել իր կնոջից եւ զոքանչից, որ նրանք սպանեն իր կնոջը անմեղութիւնից զրկող պարոնին, բայց, զեկուցանողի ասելով, այդ մեղադրանքը ոչինչով չէ հաստատվել։

Բագուի նահանգական դատարանը, քննելով գործը, գտել էր, որ թէեւ բժ. Վարդապետեան, իբր խաբված ամուսին, իր վերաբերմունքի մէջ դէպի իր կինը մի քիչ ծայրայեղութեան էր հասել, «пересолилъ», բայց ոչինչով չէ հաստատված, թէ նա ակներեւ անդութ վարմունքով յուսահատութեան եւ ինքնասպանութեան է հասցրել իր կնոջ, ուստի եւ նահանգական դատարանը արդարացրել էր նրան։

Նահանգական դատարանի պրոկուրորը, դժգոհ մնալով դատարանի վճռից, բողոքել էր դատաստանական պալատին, պնդելով, որ վկաների ցուցմունքներով եւ մանաւանդ տիկին Վարդապետեանի՝ իր մահից առաջ գրած նամակներով, որոնք թափանցված են անկեղծութեամբ, միանգամայն հաստատված է բժ. Վարդապետեանի մեղքը։ Մեղադրեալի պաշտպանը դատարանում աշխատել է ապացուցանել, որ չէ կարելի հաւատ ընծայել նրանց ճշդութեանը եւ իբր փաստ բերել է հետեւեալը. տիկին Վարդապետեան գրում է մօրը, ի միջի այլոց, թէ բժիշկը իրան տանջելու օրերը նոյն իսկ հիւանդներ չէր ընդունում եւ յիշում է երկու այդպիսի օր, մինչդեռ դեղատներից ստացած վաւերական տեղեկութիւնները ցոյց են տալիս, որ այդ յիշատակվածներից առաջին օրը բժ. Վարդապետեան գրել է 58, իսկ միւս օրը 26 դեղատոմս։ Նահանգական դատարանի պրոկուրորի կարծիքով, այդ փաստը չէ կարող ստիպել կասկածով վերաբերվել նամակների ճշդութեանը, որովհետեւ նամակների մէջ խօսված է առաւօտեան մասին, իսկ բժ. Վարդապետեան ընդունելութիւն ունէր թէ առաւօտեան, թէ երեկոյեան. նա կարող էր առաւօտը ոչ ոքի չընդունել, իսկ երեկոյեան գրել այդքան դեղատոմս։

Մեղադրեալի զոքանչի հաւատարմատար հանգուցեալ Գ. Տէր-Ստեփանեան նոյնպէս խընդիրք էր տուել դատաստանական պալատին, դժգոհ մնալով Բագուի նահանգական դատարանի վճռից։ Երկու կողմից էլ խնդրել էին դատաստանական պալատից՝ մի քանի նոր վկաներ կանչել, որոնց թւում պ.պ. Ճշմարիտեանին, Խաչատրեաններին, Քալանթարեաններին եւ այլն, բայց դատաստանական պալատը մերժել էր խնդիրքը, էական չը գտնելով այն հանգամանքները, որոնց մասին պէտք է վկայէին նրանք։

Դատաստանական պալատի պրոկուրորի օգնական Իվանով իր մեղադրական ճառում նոյնպէս պնդում էր, որ բժ. Վարդապետեան անկասկած մեղաւոր է։ Նա մի կողմից դժոխք էր դարձրել իր տունը իր կնոջ համար, միւս կողմից սպառնում էր, որ եթէ նա փախչէ տանից, ինքը, օգտվելով իր ամուսնական իրաւունքներից, էտապով կը վերադարձնէ նրան Քութայիսից։ Որ տիկին Վարդապետեանի անցեալում մի բիծ եղել է, դա անվիճելի է, բայց որ նա եղել է ընդհանրապէս բարոյական կին, այդ միաբերան հաստատում են բոլոր վկաները։ Սակայն եթէ նոյն իսկ ընդունենք, որ տիկին Վարդապետեան չատ անբարոյական է եղել, այդ կարող է միայն ծառայել իբր մեղմացնող հանգամանք եւ ոչ իբր արդարացնող փաստ բժ. Վարդապետեանի համար, որ իբր կրթված, ինտելիգենտ, համալսարանաւարտ մարդ, պէտք է հասկանար, որ կնոջ անցեալ մեղքերը չէին կարող իրաւունք տալ իրան տանջել նրան եւ ինքնասպանութեան հասցնել։ Տիկին Վարդապետեանի այն նամակները, որ նա վրացերէն լեզուով գրել է իր մօրը, արժանի են անպայման հաւատի։ Հէնց այն հանգամանքը, որ նրանք գրված են հասարակ թղթի կտորների վրա եւ մատիտով, հաստատում է, որ յիրաւի, ինչպէս ինքն էլ յայտնում է այդ նամակներում, նա ստիպված է եղել ծածուկ տեղում փակված գրել, գաղտնի ամուսնուց, սկեսուրից եւ տալից, որոնք մի տեսակ բանտարկութեան մէջ էին պահում նրան։ Այդ նամակները, վկաների ցուցմունքները եւ դիակի վրա եղած նշաններից մի քանիսը, որոնց համար բժիշկները չեն կարող հաստատել, թէ ծեծի հետքեր չեն, այլ դիակային բծեր, որովհետեւ այդ հաստատորէն պնդելու համար նրանք պէտք է ճշած լինէին այդ տեղերը, որ նրանք չեն արել,—այդ բոլորը բերում են այն եզրակացութեան, որ բժ. Վարդապետեան հաշվել է իր դրութեան հետ ամուսնութեան սկզբի ամիսներում, երբ դեռ սաստիկ է եղել իր ժարմնական սէրը դէպի կինը, բայց երբ այդ սէրը սառել է, նա սկսել է անխնայ տանջել կնոջը եւ այդ տանջանքներով հասցրել է նրան ինքնասպանութեան, ուստի եւ պէտք է մեղաւոր ճանաչվի եւ ենթարկվի այն պատժին, որ որոշված է Պատիժների օրէնսգրքի 1476 յօդուածով։

Հանգուցեալ տիկին Մարիամ Վարդապետեանի մայրը, այրի Եղիսաբէթ Օքրօժէդլովա, պատասխանելով նախագահի հարցերին, յայտնեց, թէ ինքը հրաժարվում է քաղաքացիական պահանջից, որովհետեւ, թէեւ չքաւոր կին է, փողի հարցը չէ իրան հետաքրքրողը այս գործում, այլ այն, որ վերականգնվի իր աղջկայ եւ ամբողջ ընտանիքի պատիւը, եւ թէ ինքը հայ է, բայց աղջիկը գաղտնի նամակները վրացերէն էր գրում իրան, որովհետեւ թէեւ աղջիկը գիտէր հայերէն գրել կարդալ, բայց ինքը գրագէտ է միայն վրացերէն։

(Վերջը վաղը)

ՎՐԱՑ ԹԱՏՐՈՆ

Հինգշաբթի, յունվարի 11-ին, վրաց ազնուականների թատրոնում կայացաւ տաղանդաւոր դերասանուհի Ն. Գաբունիա-Ցագարէլիի բենեֆիսը։ Այդ գիշերը խումբը խաղաց Օստրովսկու եւ Սօլօվեօվի «Բաղդաւոր օր» եւ Անտոնովի «Ես ուզում եմ կնէինա դառնալ» կոմէդիաները։ Սրանք երկուսն էլ հնութեան բեկորներ են, վրաց բեմի վրա համարեա քսան տարի խաղացվում են եւ իրանց բովանդակութեամբ էլ այնպիսի առանձին բան չեն ներկայացնում, որով կարելի լինէր արդարացնել նրանց յարութիւնը բեմի վրա։ Հին սերունդը, ճիշդ է, հնութիւն սիրող է եւ նորութեան թշնամի, բայց գեղարուեստը չէ սիրում հնութիւն, թէեւ, տարաբաղդաբար, վրաց թատրոնի հին դերասանները վերին աստիճանի պահպանողական են. այս ախտը նրանց մէջ այնքան է արմատացել, որ նոյն իսկ ազդում են նորերի վրա եւ դուք տեսնում էք, որ մի դերասանուհի, որը ընդամենը երկու տարի է բեմի վրա, արդէն դիմում է հնութեանը եւ կրկնում է բենեֆիսին այն, ինչ որ խաղացել էր անցեալ տարի, ինչպէս արաւ տ. Տասօ Աբաշիձէն։ Այսպիսով ապանում են իրանց մէջ տաղանդը, մնում են մի եւ նոյն կէտի վրա, յետադիմում են, առաջադիմելու փոխանակ։ Շատ ցաւալի երեւոյթ է։

Թատրոնը ծայրէ ի ծայր լիքն էր հասարակութեամբ, որոնց մէջ շատ կային՝ թէ ինտէլիգէնտ եւ թէ միջին դասակարգի հայեր. հետաքրքրութեամբ լիքը՝ եկել էին թատրոն, բայց հիասթափված մնացին եւ ձանձրացան պիէսների հնութիւնից, մանաւանդ որ էլէքտրական լուսաւորութիւնը հանդաւ սկզբից եւ ներկայացումը շարունակեցին խորին մթութեան մէջ։ Վերջը մի փոքր կենդանութիւն պատճառեց զաւեշտը, որի մէջ տ. Գաբունիան դուդուկի ներդաշնակութեամբ երգեց երեք վրացերէն երգ, իսկ օպերետի դերասան կոմիկ Գ. Տումանսկին (հայ իշխան Թումանեանց) երգեց կոմիքական կուպլետներ, որոնք մեծ բաւականութիւն պատճառեցին հասարակութեանը։ Ներկայացումը վերջացաւ լէզգինկա պարով. տ. Գաբունիային հասարակութիւնը ընդունեց ծափահարութիւններով եւ մատուցեց մի քանի ընծաներ։

Thaleia

ՆԱՄԱԿ ՍԱՄԱՐԿԱՆԴԻՑ

Դեկտեմբերի 30-ին

Գործով գալով Անդրկասպեան երկիրը, մի քանի ամիս մնացի Սամարկանդում։ Այս հեռաւոր երկրում եւս նկատվում է Արիստակէս եպիսկոպոս Սեդրակեանի հեռատեսութիւնը. մինչդեռ մեր հայկական գաւառները վիտում են ազէտ քահանաներով, այս երկրում պատահում էք ուսում առած եւ նոյն իսկ համալսարանական քահանայի։

Աչքի առաջ ունենալով այն հանգամանքը, որ այս ահագին երկրում հայերը ցրված ապրում են զանազան օտար ցեղերի հետ եւ կարող են շատ հեշտութեամբ կուլ գնալ եւ բարոյապէս փչանալ, Արիստակէս եպիսկոպոս աշխատել է գոնէ եկեղեցու միջոցով կապ պահպանել եւ բարոյապէս միխիթարել։ Հայը իր լաւ կողմերի հետ ունի եւ այնպիսի զզուելի, ցած կողմեր, որոնք մարդուս ապշեցնում են. նա որքան նորասէր է, շատ հարցերում էլ անտանելի պահպանողական, յետադէմ է։ Հայը միշտ տեսել է իր քահանային քսու, ձեռքը ողորմութեան համար մեկնող, հնազանդ եւ փարեալ տասը տեղից կարկատած, ուստի նա չէ սիրում այն քահանային, որը չէ ծառայում նրա ստոր, եսամոլ պահանջներին, չէ քսվում եւ գիտէ իրան բարձր պահել։

Այդպիսի մի անձն է Սամարկանդի նորընծայ համալսարանական քահանան, որը նոյն իսկ բարձրացնում է հայի անունը տեղական իշխանութեան առաջ. բայց նրա դէմ գրգռվել են մի քանի անձնաւորութիւններ (4—5 հոգի), որոնք տեսնելով նոր քահանայի մէջ նոր տիպի գործիչ, ամեն տեսակ անվայել բամբասանքի տոպրակը բացած, աշխատում են նրա վարկը ձգել եւ նոյն իսկ հեռացնել տալ։ Եւ դրա համար չեն էլ ամաչում դիմելու մատնութիւնների. այդ բոլորովին պատիւ չէ բերում նրանց. դեռ քանի ուշ չէ, պէտք է թողնեն իրանց ամօթաբեր ընթացքը եւ միացած միւս բազմաթիւ ծխականների հետ, ձեռք ձեռքի տուած իրանց եռանդով լի քահանայի հետ, աշխատեն գործ կատարել եւ առաջանալ։ Թող մոռանան այս հեռաւոր երկրում հայի յատուկ երկպառակութիւնը, նախանձը եւ իրար մնասելը եւ իրանց դրացի հրէաներից օրինակ առնելով՝ գործեն համերաշխութեամբ,

---

Պրոտագորասը ասում էր, թէ ոչինչ չը գիտէ աստուածների գոյութիւն ունենալու կամ չունենալու մասին։ Ես էլ Պրոտագորասի կարծիքին եմ եւ, կրկնելով նրա խօսքերը, ասում եմ քեզ, Թրաղէաս, որ չը գիտեմ, կան արդեօք աստուածներ, թէ չը կան։

—Քո պատասխանը վշտացրեց ինձ։ Ես կուզէի, որ դու վճռաբար պատասխանէիր ինձ, թէ աստուածներ չը կան, որովհետեւ այն ժամանակ ես կարող էի մեռնել, արհամարհելով միմիայն մարդկանց, իսկ այժմ ես կը փափագէի վեր կենալ մահճից, վերցնել Պէլիոնը եւ այդ լեռով կործանել Օլիմպոսը *)։

Նա փոքր ինչ բարձրացրեց ծանրացած գլուխը, նրա ցաւատանջ անդամները շարժվեցին վերմակի ծիրանագոյն ծալքերի տակ եւ աչքերը բոցավառվեցին։

—Որովհետեւ, եթէ կան աստուածներ, ինչ տեսակ էակներ են նրանք, որ նրանց ամենազօրութիւնը բարիք չէ ստեղծում, իսկ բարութիւնը արգելք չէ լինում չարիքի գոյութեան... Ես չապրեցի, Դէմէտրիոս, մինչեւ հասուն տարիքներիս վերջը. ես երբէք զուրկ չեմ մնացել հարստութիւնից եւ պատուից եւ առաքինի կնոջս հետ ես վայելել եմ միշտ անվերջանելի երջանկութիւն։ Բայց եւ այնպէս, եթէ դու հարցնէիր ինձ, արդեօք կրնե՞լ եմ ես տանջանքներ, ես կը պատասխանէի,—ինձ, ինչպէս Լաոկօօնին **), խեղդում էին նրանց օձային օղակները։ Այն օրից, երբ հօրս ձեռքերը զցեցին ուսերիս չափահասութեան պատմուճանը *), ինչ է եղել տեսա՞ս ու զգացած։ Ագահութեան եւ գոռոզութեան յաղթանակը, արդարութեան արհամարհումը, առաքինութեան ոտնակոխումը լրբութեան կողմից, բանականութեան ստորացումը խարդախութեան եւ յիմարութեան կողմից։ Օ՜ Դէմէտրիոս, այդ աւելի սարսափելի ողբերգութիւն է, քան Էսքիլէսի եւ Էւրիպիդէսի բոլոր մռայլ շարադրութիւնները, եւ եթէ աստուածները հանդիսատես լինէին այդ ողբերգութեանը Օլիմպոսի բարձունքից, նրանց զայրոյթին կը պակասէին չանթեր եւ կարեկցութեանը՝ արտասուքներ։ Բայց մարդկութիւնը ներկայացնում է նաեւ ծիծաղաշարժ զաւեշտներ, որոնք սակայն ծիծաղս չէին բերում, որովհետեւ խեղդում էին կոկորդս դառնութեամբ։ Գայլերի ագահութիւնը անմեղ բան էր թւում ինձ, համեմատելով նրանց թաթերը լիզող աղուէսների հնազանդութեան հետ։ Վագրը եւ բորենին սարսափ էին ազդում ինձ, բայց սիրտս խառնում էր զզուանքից, երբ տեսնում էի ոչխարների յիմարութիւնը, որոնք անտրտունջ թողնում էին, որ լափեն իրանց։ Ատելի էին ինձ գամփռները, երբ նրանց արիւնռուչ ատամները բռնում էին ազնիւ եղջերուին, բայց ատելութիւնից էլ կծու արհամարհանքով էի նայում նապաստակների վրա, որոնց մինչեւ անգամ ճահճից դուրս սողացող գորտի ստուերը սարսուռ էր ազդում եւ ստիպում փախչել թփերը... Քանի՞ քանի անգամ հարցրել եմ աստուածներից (որոնց մասին նոյնպէս, ինչպէս դու, ոչինչ չը գիտէի), զիշերային խաղաղութիւնից, արեւի լոյսից,—ինչո՞ւ Ֆիլիպպ քաղաքի մօտ յաղթանակ տարաւ Օկտավիանը եւ կորուստի մատնվեց արի Բրուտոսը։ Ի՞նչու Պօմպէոսի լիրք ձեռքը թոցրեց Ցիցերօնի ուսերից նրա վեհ գլուխը։ Ինչո՞ւ առաքինի եւ անվեհեր Գերմանիկոսը կորաւ ստոր Տիբերիոսի թոյնից։ Ինչո՞ւ Մեսալինան ապրեց մինչեւ իր կեանքի վերջը սանձարձակ զուարճութիւնների մէջ եւ մեռաւ վարդերից ու շուշաններից պատրաստած մահճում, իսկ ազնիւ եւ խստակեաց Սրրիան վերջացրեց կեանքը իր ամուսնու եւ իր սեփական արիւնի վտակների մէջ։ Երկիւղից դողացող եւ միմիայն իրանց անսահման կալուածների ապահովութեան եւ իրանց սենատորական պատմուճանների ծիրանիի մասին մտածող սենատորների շրջանում, ինչպէս եւ այն ժամանակ, երբ տեսնում էի հռոմայեցի ժողովրդին անֆիթատրոնում եւ ցիրկերում չափածոյ ծափահարութիւններով ողջունելիս Ներոնին, ես բացականչում էի յաճախ իմ սրտում. «Ա՜խ, երբ եւ որտեղ պէտք է վերջապէս մարդիկ տեսնեմ»... Ինձ թւում էր երբեմն, թէ ամբողջ հռոմայեցի ժողովուրդը տեսնում եմ Կաւդինեան լուծի *) տակ կանգնած զինուորի կերպարանքով։ Նա կանգնած էր, մէջքը ծռած, եւ ծոյլ մատներով քըշփորում էր գետնից կոչտ լոբահատիկները, գանգատվելով միայն այն բանից, որ քիչ էր գտնում հատիկներ։ Նրա փորը հեղհեղ մեծանում էր, մինչդեռ ամբողջ մարմինը փոքրանում էր, մինչեւ որ, վերջապէս, առաջվայ հասարազուկ եւ պարզաճակատ զինուորից նա դարձաւ հաստափոր դաճաճ՝ սատիրի **) եւ կապկի դէմքով։ Ես դիտում էի այդ, Դէմէտրիոս, եւ զգում էի, որ իմ սեփական հոգին ներփակված է scrinium-ի մէջ, որտեղ պահվում են ձեռագիրների ծրարները։ Նա ճնշված էր, կապկապված անհրաժեշտութեան շղթաներով եւ, ծածկված լինելով աշխարհից, դատապարտված էր լռութեան։ Մտքերը պատէպատ էին դիպչում գլխիս մէջ, ինչպէս աղատութեան եւ օդի ծարաւ կալանաւորներ։ Իմ զգացածը դուրս չէր թռչում կրծքիցս, այլ սուզվում էր նրա յատակը, ֆշշալով, ինչպէս հալած արճիճը ջրի մէջ։ Ինչպէս մի ծննդկան, որ չէ կարողանում ծնել իր արգանդում գտնվող երեխային, ես չէի կարողանում բացայայտել աշխարհին իմ էութիւնը։ Երբ ես աղում էի ատամներս, որպէս զի չը խօսեմ, զսպում էի ձեռքս, որպէս զի բան չանեմ, կուլ էի տալիս թունքս, որպէս զի չը թքեմ նրանց վրա, որոնց արհամարհում էի,—այնպիսի տանջանքների էի ենթարկվում, որոնցից չէին կարող ազատել ինձ ոչ հարստութիւնը, ոչ պատիւները, ոչ ընտանեկան բաղդաւորութիւնը, ոչ իմ ստոիկ *) ուսուցիչների խրատները։ Բայց, աւաղ, մարդս ամենազօր չէ նոյն իսկ ինքն իր վերաբերմամբ։ Բնութեան ստեղծած թրաղէասը աշխարհ էր եկել ժամանակի սարսափների ստեղծած թրաքէասից։ Կաւդինեան լուծի տակ ճկված զինուորը փորձեց ուղղել մէջքը,—եւ ահա այժմ մեռնում է... Ուրեմն ինչ տեսակ էակներ են աստուածները, օ՜ Դէմէտրիոս, եթէ նրանք գոյութիւն ունեն եւ եթէ այն բոլոր բաները, որ ես քեզ պատմեցի, նրանք դիտում են հանգիստ ու լռութիւն են պահպանում։

(Կը շարունակվի)

---

*) Օլիմպոսը Զեսի և միւս գլխաւոր աստուածների բնակավայրն էր համարվում, իսկ Պէլիոն այն սարն էր, որ, առասպելի համաձայն, Զեսի դէմ ապստամբած հսկաները վերցրել էին ու դրել Օսսա սարի վրա, որպէս զի կարողանային հասնել երկնքին։ Ս. Թ.

**) Լաոկօօն, ըստ հին ասանդութեան, Ապօլլոնի քուրմն էր Տրոյայում։ Ծովից դուրս եկած երկու վիշապ փաթաթվեցին նրա ու իր զաւակների շուրջը և խեղդեցին նրանց։ Ս. Թ.

*) Պատմուճան, տոգա, հռոմայեցիները հագցնում էին պատանիներին, երբ նրանք չափահաս էին դառնում։ Ս. Թ.

*) Կաւդինեան կիրճում հռոմայեցիների զօրքը, 321 թուին Ք. ծ. ա., յաղթվեց Սամնիտներից և ստիպված եղաւ անցնել լուծի տակից։ Ս. Թ.

**) Հին յոյների դիցաբանութեան մէջ սատիրները երկրորդական աստուածներ էին և համարվում էին Բաքոսի հետեւորդներ։ Նրանց երեւակայում էին լայն, տափակ քթով, այծի ականջներով, եղջիւրներով, սըմբակներով և պոչով։ Փոխարերաբար սատիր անուանում են կրքոտ, վաղշտ մարդկանց։ Ս. Թ.

*) Ցոյն և հռոմայեցի փիլիսոփաներ, որոնք արհամարհանք էին քարոզում դէպի դեանքի բարիքները ու զուարճութիւնները և կեանքի իմաստը ու հիմնաքարը համարում էին պարտականութեան զգացմունքը։ Ս. Թ.

որպէս զի օր օրի վրա առաջ գնան։ Հրէաներուն համերաշխութիւնը եւ իրար փոխադարձ օգնելը օրինակելի է. այդ է պատճառը, որ համարեա տիրապետել են այս «սեր ու մեղր» ըղխող երկիրը, իսկ հայերից չատ քչերն են առաջ գնացել։

Իսկն է խռովութեան պատճառը։ Դարձեալ երէցփոխի հաշիւները. աղօթատան (նոյն իսկ Աստուծու տուած եկեղեցի էլ չունեն) նախկին երէցփոխի հաշիւների մէջ նկատվում է մի փոքր գումարի պակասորդ. նորը պահանջում է, իսկ հինը պնդում է, որ իր հաշիւները ճիշդ են. դրա հետ խառնվում է եւ տիրացուին հեռացնելու հարցը։ Հաշիւները գնում են կօնսիստորիա. մէջ է մտնում քահանան եւ աշխատում վերջ դնել խռովութիւններին, բայց սաղերը աւելի զրգռվում են եւ խառնելով գործի հետ անձնական զանազան հաշիւներ, կրքեր, բացում են բամբասանքի լայն դռները։ Պակաս չեն եղել եւ խռովութիւններ Ասխարգում. մեծ մասամբ ամեն տեղ երէցփոխական ցաւն է...

Ճանապարհորդ

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Անցեալ տօն օրերին աղքատներին բաժանելու համար ստացել էինք հետեւեալ նուէրները. 1) Բագուից, մի պարոնից, որ կամենում է անյայտ մնալ, 50 ռուբլի. 2) Թիֆլիսից, Վ. Տ. Գրիգորեանից 10 ռուբլի, որ հաւաքված է հանգուցեալ Խորէն եպիսկոպոս Ստեփանէի յիշատակը յարգողներից. 3) Բագուից, Գարեգին Մելիք-Մարութեանից 20 ռուբլի։ Այս նուէրները մենք բաժանեցինք մեր խմբագրատանը՝ Թիֆլիսի աղքատներին եւ այլ եւս փող չունենք այս նպատակով։

—

Բագուից մի պարոն, որ կամենում է անյայտ մնալ, ուղարկել է մեզ 50 ռուբլի յօգուտ հայ չքաւոր ուսանողների։ Նոյն նպատակով ստացել ենք. 1) Քութայիսից, Դաւիթ աւագ քահանայ Եարալեանից 25 ռուբլի. 2) Սուխումից, Անյայտից, 5 ռուբլի. 3) Բագուից, Պատուական Սաղաթէլեանից 50 ռուբլի. 4) Վաղարշապատից, Ա. Դարբինեանից 12 ռուբլի։ Մենք շուտով կը տպագրենք ուսանողների համար մեր խմբագրութեան մէջ հաւաքված գումարների հաշիւը։

—

Բագուից, պ. Մեսրոպ Ստեփանեանց «Մշակի» ներկայ տարվայ մի օրինակ նուիրեց Զանգեզուրի գաւառի Լոր գիւղի հասարակութեան ի յիշատակ հանգուցեալ Գրիգոր Ջանչեանի։

—

Երէկ լոյս տեսաւ «Մուրճ» ամսագրի առաջին համարը։

—

Փորձերը ցոյց են տուել, որ Կովկասում պատրաստած չվէյցարական պանիրը նման է իր համով բուն չվէյցարական պանրին, իսկ Ռուսաստանի ներքին նահանգներում պատրաստած պանիրները, որքան խնամքով էլ չինված լինեն, շատ տարբերվում են չվէյցարականից։ Քիմիական հետազօտութիւնները ցոյց տուին, որ Ռուսաստանի հիւսիսի պանիրը, ի միջի այլոց, համեմատաբար աւելի քիչ է պարունակում ֆոսֆորի բաղադրութիւններ, քան չվէյցարականը։ Այդ պատճառով միտք ծագեց աւելացնելու ռուսաց կաթին ֆոսֆորի բաղադրութիւններ։ Փորձը ցոյց տուեց, որ պանրի համը լաւանում է եւ մօտենում չվէյցարականին։ Այժմ երկրագործութեան մինիստրութիւնը որոշել է այդ փորձերը կատարել մեծ չափով եւ ընդարձակ ծրագրով։

—

Առաջիկայ գարնանը, երբ նաւերի երթեւեկութիւնը նորից կը սկսվի, Պետերբուրգից ճանապարհ կընկնի մի առանձին մասնաժողով, որ սանիտարական մանրակրկիտ զննութեան կենթարկէ այն բոլոր մարդատար նաւերը, որոնք երթեւեկում են Սեւ ու Ազովեան ծովերի, նոյնպէս եւ Վոլգա, Դնեպր, Դօն եւ այլ գետերի վրա։

—

Ժողովրդական լուսաւորութեան մինիստրութիւնը շատ կարճ ժամանակից յետոյ կը սկսէ մշակել մի բոլորովին առանձին տիպի ուսումնարաններ հիմնելու հարցը, որտեղ երեխաները կարողանային բաւականաչափ պատրաստվել եւ ապա մտնել միջնակարգ դպրոցները։

—

Այն անյարմարութիւնները եւ նեղութիւնները, որ կրում են Կրիմի, Բեսարաբիայի եւ Կովկասի գինեգործները իրանց պատրաստած գինիները ծախելու ժամանակ, թելադրել են գինեգործներին դիմել հետեւեալ միջոցին վաճառահանելու իրանց արդիւնքը։ Գինեգործների մի խումբ դիմել է ֆինանսների մինիստրին խնդրելով, որ պետական գինետներին թոյլ տրվի կօմիսիայով վերցնել ծախելու գինիներ եւ այդպիսով բանալ գինիների համար մի ընդարձակ վաճառանոց, ազատելով գինեգործներին միջնորդների հարստահարութիւնից։

—

«Новое Время» լրագրին հաղորդում են, որ 100 հոգի Օդեսայի բժիշկներից եւ ֆելդշէրներից ցանկութիւն յայտնեցին ուղեւորվել Աստրախանի նահանգը՝ այնտեղի ազգաբնակութեանը բժշկական օգնութիւն հասցնելու համար։

—

Յունվարի 18-ին լրանում է միջազգային իրաւունքի յայտնի պրոֆեսոր Ֆ. Մարտէնսի գիտական եւ մանկավարժական գործունէութեան երեսնամեայ յօբելեանը։

—

Ներկայ տարվայ ընթացքում, ինչպէս հաղորդում է «Донская Рѣчь» լրագիրը, կառավարական շրջաններում պէտք է քննադատվի Դօնի շրջանում զեմստվո մտցնելու հարցը։

—

ՍՂՆԱԽԻՑ մեզ գրում են. «Վերջին խաղարկութեան 8000 ր. ընկել է սղնախեցի Ալէքսանդր Պանկիսեանին։»

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԷԴՈՒԱՐԴ VII, ԹԱԳԱՒՈՐ ԱՆԳԼԻԱՑԻ

—

Իր մօր, Վիկտորիա թագուհու մահվանից յետոյ, յունվարի 9-ին, անգլիական գահի վրա բարձրացաւ Ալբերտ-Էդուարդ, Ուէլսի իշխանը, որ ծնվել է 1841 թուի նոյեմբերի 9-ին եւ այժմ արդէն 60 տարեկան է։

Անգլիայի նոր թագաւորը, մինչեւ 16 տարեկան հասակը, կրթվել եւ դաստիարակվել է իր հօր՝ պրինց Ալբերտի անմիջական հսկողութեան տակ եւ ապա այցելել է Էդինբուրգի, Օքսֆորդի եւ Կէմբրիջի համալսարանները։ Զանազան ժամանակներում նա կատարել է երկարատեւ ճանապարհորդութիւններ դէպի անգլիական ընդարձակ գաղթականութիւնները՝ տեղն ու տեղը ծանօթանալու եւ ուսումնասիրելու այդ գաղթականութիւնների կարիքները։ 1861 թուից նա ամուսնացած է դանիական թագաւոր Խրիստիան IX-ի դստեր՝ Ալէքսանդրա-Կարոլինա-Շարլոտտա-Լուիզա-Իւլիայի հետ, եւ ունի 5 որդի, որոնցից աւագը՝ Ալբերտ Վիկտոր յայտարարված է այժմ անգլիական գահի թագաժառանգ.

Էդուարդ VII թագաւորը այն երկարատեւ տարիների ընթացքում, երբ նա թագաժառանգ էր, ընդհանրապէս հեռու է պահել իրան Անգլիայի ներքին եւ արտաքին քաղաքականութեան վրա յայտնապէս ազդեցութիւն գործելու ձգտումից, ուստի մի առանձին հրուշակ կամ ժողովրդականութիւն չէ վայելում անգլիական ժողովրդի մէջ։ Մամուլը երբէք առանձին ուշադրութիւն չէ նուիրել նրան. այս պատճառով նոր թագաւորի անձնաւորութեան եւ նրա քաղաքական հայեացքների, համակրութիւնների եւ հակակրութիւնների մասին անգլիական ժողովրդի մէջ շատ քիչ տեղեկութիւններ են տարածված։

Էդուարդ VII իր թագաժառանգութեան օրերում ապրում էր իբրեւ մասնաւոր անձն, վարում էր մի այնպիսի կեանք, որ վարում են ընդհանրապէս անգլիական հարուստ արիստոկրատները։ Յայտնի է միայն, որ նա անդամ եւ հովանաւոր էր շատ բարեգործական ընկերութիւնների, եռանդով մասնակցում էր զանազան սպորտների եւ կարեւոր դէպքերում կատարում էր անգլիական գահի ներկայացուցչի պաշտօնը թէ արտասահմանում եւ թէ երբեմնապէս Անգլիայում, իր մօր՝ Վիկտորիա թագուհու զառամեալ հասակի պատճառով։

Անգլիական մամուլի մէջ վերջին տարվայ ընթացքում երեւեցած տեղեկութիւններին նայելով՝ Էդուարդ VII համակրում է ունիոնիստների այժմեան կուսակցութեան իմպերիալիստական ձգտումներին, կողմնակից է Զէմբէրլէնի քաղաքականութեան հարաւային-Աֆրիկայում եւ մի առանձին սէր չէ տածում դէպի դէմօկրատիական գաղափարները։

Վիկտորիա թագուհուց առաջ անգլիական գահի վրա նստող Հաննօվէրեան տոհմի թագաւորները՝ Գէօրգ III, Գէօրգ IV եւ Վիլհելմ IV, մանաւանդ վերջին երկուսը, հաճելի յիշողութիւններ չեն թողել անգլիական պատմութեան մէջ։ Բացի յայտնի ոտնձգութիւններից անգլիական ազգաբնակչութեան ու ժողովրդական իրաւունքների դէմ, նրանք վարում էին նաեւ անգլիական գահի համար անպատուաբեր ընտանեկան կեանք, եւ իրանց այդ մասնաւոր կեանքով տեղիք էին տալիս նոյն իսկ ժողովրդական ապստամբութիւնների։ Անգլիական ազգը մոռացել է արդէն այդ ամենը Վիկտորիա թագուհու 64-ամեայ երկարատեւ թագաւորութեան ընթացքում, մի թագուհու, որի խիստ սահմանադրական վարչութեան անշեղ ընթացքը եւ անբիծ ընտանեկան կեանքը մեծ գոհունակութիւն էին պատճառում անգլիական ժողովրդին։ Ի նկատի առնելով նոյն իսկ այն սուղ տեղեկութիւնները, որոնք կան նոր թագաւորի անձնաւորութեան մասին, կարելի է յոյս ունենալ, որ 19-րդ դարի սկզբում անգլիական թագաւորների բռնած ընթացքը եւ այն տխուր երեւոյթները, որոնք տեղի ունեցան այդ ժամանակ, չեն կրկնվի այլ եւս 20-րդի սկզբում։

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

—«Journal de Débats»-ի յունվարի 2-ի համարում տպագրված է մի ընդարձակ յօդուած՝ «Բաղդադի երկաթուղին» վերնագրով։ Յօդուածի մէջ հաղորդված տեղեկութիւններից երեւում է, որ Deutsche Bank եւ Թիւրքական բանկը, որոնք միացել եւ կազմել էին մի ընկերութիւն դէպի Բաղդադ եւ Պարսից ծոցը երկաթուղի շինելու նպատակով, Թիւրքական կառավարութիւնից իրաւունք ստացան պահապան զօրախմբեր կազմակերպել՝ պաշտպանելու իրանց աշխատանքները քրդերի եւ արաբների աւազակային արշաւանքներից, նման այն զօրախմբերին, որ պահում է ռուսաց կառավարութիւնը Մանջուրիայում Արեւելեան-Չինական երկաթուղային գծի վրա։

—С. Пет, Вѣд. լրագրին հաղորդում են կ. Պոլսից. «Թիւրքական զինուորները ծեծեցին անգլիական դեսպանատան անդամներին։ Այս հանգամանքը սաստիկ յուզում է ամենքին եւ զանազան լուրերի ու ենթադրութիւնների առիթ է տալիս։ Ծեծը, որ կերել են անգլիացիները, եղել է այնքան սաստիկ, որ ծեծվողներից մի քանիսը հիւանդացել եւ անկողին են մտել։ Սուլթանը մի քանի անդամ արդէն ուղարկել է իր պալատական աւագ-բժշկին բրիտանական դեսպանատուն՝ տեղեկանալու հիւանդների առողջութեան մասին։ Վնասվածների մէջ են եւ դեսպանական գործերի լիազօրը, երկու քարտուղարները, զինուորական գործակալը, կցորդը եւ ուրիշները։ Այս պատճառով զարմանալի չէ, որ անգլիական դեսպանը հարկադրաբար պահանջում է պատժել զինուորներին. բայց Թիւրքական կառավարութիւնը վճռել է պաշտպանել նրանց այն պատրուակով, որ զինուորները կատարում էին իրանց պարտականութիւնը այն ժամանակ, երբ հետաքրքրասէր անգլիացիները կամենում էին ներս մտնել վառոդի պահեստը։

„ՄՇԱԿԻ“ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՑ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

—

11 յունվարի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Նոցա Կայսերական Մեծութիւնները Օդոստափառ երեխաների հետ «Շտանդարտ» զբօսանաւով ժամանեցին Սեվաստոպոլ յունվարի 10-ին, առաւօտեան 9 ժամին եւ ճանապարհ ընկան երկաթուղով Պետերբուրգ երեկոյեան 7 ժամ 30 րոպէին։—Հրատարակված է Բարձրագոյն հրովարտակ Պետական Խորհրդի անդամ սենատոր Տէրնէրի անունով, որով շնորհվում են Նրան ս. Ալէքսանդր Նէվսկիի շքանշանի ադամանդազարդ նշանները։

ԲԵՐԼԻՆ։ Զօրքին տրված հրամանով, հանգուցեալ թագուհու մահվան պատճառով սուգ է նշանակված զօրքի օֆիցէրների համար 14 օր. իսկ առաջին գվարդիական դրագունների գնդի համար, որի շէֆն էր թագուհին, երեք շաբաթ։

ՀԱՎՐ։ Ռուսաց ականանաւ «Օսէտր» աջողութեամբ ջուրն է իջեցրած։

ՕՍԼՕՐՆ։ Թագուհու մարմինը դեռ եւս հանգչում է մահճակալի վրա այն սենեակում, ուր թագուհին վախճանվեց։ Զինուորները կանգնած են շարքերով սանդուղքի վրա. երկու օֆիցէրներ պահապան են կանգնած այն սենեակի դռների մօտ, ուր հանգչում է մարմինը։ Մառաները եւ ֆէրմէրները մէկը միւսի ետեւից կամաց կամաց անցնում են հանգուցեալ թագուհու առջեւից, որի դէմքը հանդիստ է եւ խաղաղ, նման մարմարեայ արձանի. նրա ձեռքերը խաչած են կրծքի վրա. մի չքեղ, բայց գծագրութեամբ պարզ խաչ դրված է կուրծքի վրա. գլուխը դէպի աջ է թեքված. մահճակալը շրջապատված է ծաղիկներով։

ԼՕՆԴՕՆ։ Գաղտնի խորհրդի նիստին գալուց յետոյ, թագաւորը առաջ չը մտաւ դահլիճը, ուր հաւաքվել էին խորհրդի անդամները։ Դէվոնշիրեան դուքսը, որպէս գաղտնի խորհրդի նախագահ, հաղորդեց ներկայ եղողներին թագուհու մահվան եւ Ուէլսի իշխանի գահը բարձրանալու մասին։ Ապա դուքսերից եւ նշանաւոր անձերից բաղկացած պատգամաւորութիւնը գնաց թագաւորի մօտ, որ մի քանի րոպէից յետոյ եկաւ դահլիճը եւ դիմեց ներկայ եղողներին մի կարճ ճառով։ Նրանից յետոյ, երբ լորդ-կանցլերը երդում ընդունեց թագաւորից, գաղտնի խորհրդի բոլոր անդամները երդում տուեցին թագաւորին հաւատարմութեան մէջ եւ մէկը միւսից յետոյ համբուրեցին թագաւորի ձեռքը։ Այդ կէտում հանդէսը վերջացաւ։ Վաղը, առաւօտեան 10 ժամին, սէնտ-ջէմսեան պալատի առջեւ Էդուարդ VII-ը հանդիսաւոր կերպով կը հրատարակվի Մեծ-Բրիտանիայի եւ Իրլանդիայի թագաւոր եւ Հնդկաստանի կայսր։ Մարլբորահաուս վերադառնալիս, ճանապարհին, ժողովրդական ամբոխը ամեն տեղ ողջունում էր թագաւորին։

ԽԱՐԿՕՎ։ Յայտարարված է դատավճիռ բոշաների աւազակախմբի գործի վերաբերմամբ։ Աւազակախմբին մասնակցողները, ութ մարդիկ, դատապարտված են մահվան պատժի կախաղանի միջոցով։ Մեծկողները, մարդ եւ կին, դատապարտված են տաժանակիր աշխատանքների 15 տարով։ Կրտսեր Կալմիկովի վերաբերմամբ առանձին որոշում կայացաւ։ Դատաւորները խորհրդակցում էին 12 ժամ, գործը լսվում էր 12 օր։ Մեղադրվողները համեմատաբար հանդիստ կերպով լսեցին դատավճիռը։ Դատարանը որոշեց ներկայացնել դատավճիռը Կիեւի զինուորական շրջանի զօրքերի հրամանատարի հաստատութեան։ Մեղադրվողները յայտնեցին՝ թէ տալու են վճռաբեկ գանգատներ, որի համար տրվում է 48 ժամ ժամանակ։

ԼՕՆԴՕՆ։ Պարլամէնտը կը գումարվի կէս օրից յետոյ, այնպէս որ բոլոր անդամները եկան սգաւորված։ Սպիկէրը յայտնեց համայնքների ժողովին թագուհու մահվան մասին եւ աւելացրեց. «Մեզ վրա դրված է պարտաւորութիւն հաւատարմութեան երդում տալ Էդուարդ VII-րդ թագաւորին։ Դրանից յետոյ, նախ սպիկէրը, իսկ յետոյ պարլամէնտի մնացած անդամները երդում տուեցին. երդում առուցին նոյնպէս՝ Եօրկի եւ Կէնտրբէրիի արքեպիսկոպոսները, ապա Եօրկի եւ Կօնաուտեան դուքսերը, կոմս Բօբէրտ եւ մնացած լորդերը։ Քննվում էին՝ թագաւորին պարլամէնտի երկու ժողովների կողմից թագուհու մահվան առիթով ցաւակցական զգացմունքներ եւ գահակալութեան առիթով շնորհաւորութիւններ մատուցանելու առաջարկութիւնները։

ԼՕՆԴՕՆ։ Գաղտնի խորհրդի ժողովին սէնտ-ջէմսեան պալատում թագաւորը եւ նրա սիփոան եկան զինուորական համազգեստներով։ Թագաւորը ճառ չը կարդաց, այլ խօսեց յանպատրաստից եւ շատ ազդու։ Ճառը, երեւի, յետոյ պաշտօնապէս կը հրատարակվի։ Այն բոլորէին, երբ թագաւորը սկսեց ճառը, սէնտ-ջէմսեան պարկում դրված թնդանօթներից թնդանօթաձգութիւն սկսվեց ի նշան կառավարութեան փոփոխութեան։ Կօննաուտեան եւ Եօրկի դուքսերը մնում են Լօնդօնում մինչեւ վաղը։ Մարմնի տեղափոխութիւնը Վինդզոր տեղի կունենայ, երեւի, վաղը չէ միւս օրը։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Մեծ բրիտանական թագուհու մահվան առիթով, Բարձրագոյն Պալատը սուգ կը պահի երեք ամիս։

Թագաւոր Կայսրը հրամայեց, յաւերժացնելու համար առաջիկայ յունվարի 14-ին ծովային կադէտների դպրոցի 200-ամեայ յօբելեանը, առանձին կրծքային նշան հաստատել կրծքի ձախ կողմի վրա կրելու համար հանդիսաւոր եւ սովորական համազգեստներ հագած ժամանակ։

ԼՕՆԴՕՆ։ Զինուորական մինիստրութեան հրամանով, նոր թագաւորի գահ բարձրանալը յայտարարելու ժամանակ, զօրքերը շարքերով կանգնած կը լինեն փողոցներում։ Զօրքի համար որոշված է սուգ պահել մինչեւ փետրվարի 20-ը. մինչեւ թաղման օրը դրօշակները զարդարված կը լինեն չզարդով։ Պաշտօնական լրագրի մէջ տպված պրոկլամացիայով, այն բոլոր անձինք, որոնք որ եւ է պաշտօն ունեն, հրաւիրվում են մնալ իրանց պաշտօններում։ Սգահանդէսի առաջին մասը հանգուցեալ թագուհու համար կը կատարվի ս. Գէորգի եկեղեցում, Վինդզորում, օտար բարձրագոյն անձանց եւ այլ հրաւիրվածների ներկայութեամբ։ Ապա մարմինը կը տեղափոխվի Ֆրոգմոր, ուր հոգեհանգիստ կը կատարվի, որին ներկայ կը լինեն արքայական ընտանիքի անդամները միայն։

ԼՕՆԴՕՆ։ Թագաւորի գահակալութեան ծիսակատարութիւնը չատ հետաքրքիր եւ գեղանկար է։ Առաւօտեան ութ ժամին զրենադէրներից բաղկացած հերթակալ զօրքերը աքսայական դրօշակներով կանգնեցին մեծ քառուղիների ձեւով սէնթ-Ջէյմսեան պալատի բակում։ Պալատի պատշգամբը զարդարված է կարմիր մահուդով։ Մեծ ամբոխ հաւաքվեց հարեւան փողոցներում եւ ծառուղիներում. համաբեա ամենքն էլ ոգեւորված են։ Ինն ժամին օֆիցէրները աղաղակում են «զգուշացէք» եւ նոյն րոպէին կոմս Ռօբէրտս անցաւ իր սվիտայով ձիու վրա հեծած։ Ցանկարծ բոլոր հայեացքները դառնում են դէպի այն պատշգամբը, ուր կանգնեցին չորս հէրօլդներ ութը ասիատէնտներով, բոլորն էլ միջնադարեան զանազանագոյն զգեստներով. դրանց ետեւից երեւացին՝ Նորֆոլկեան դուքսը, ժառանգական դրօս ժարշալը եւ պալատի բարձրաստիճան պաշտօնեաները։ Նորֆոլկեան դուքսը նշան արեց, որից յետոյ ասիատէնտները հնչեցրին արծաթէ փողերը։ Դրանից յետոյ գլխաւոր հէրօլդի փոխանորդը, մի 80-ամեայ ծերունի, առաջ է անցնում եւ խորին լռութեան մէջ բարձրաձայն կարդում է աւանդական պրոկլամացիան, որով յայտարարում է հին ոճով եւ բարձրահնչիւն խօսքերով Թագաւորի գահակալութեան մասին։ Այդ ընթերցանութեան ժամանակ բոլոր գլուխները բացված են։ Վերջում, բարձրացնելով եռանկիւնի գլխարկը, հէրօլդը բացականչեց՝ «God save the king». ամբոխը պատասխանեց ամենամեծ ոգեւորութեամբ։ Երաժշտական խումբը նուագում էր ազգային օրհներգը այն ժամանակ, երբ հէրօլդները շարունակում էին հնչեցնել փողերը։ Երբ ծէսը վերջացաւ, հէրօլդները եւ միւս մասնակիցները գնացին քաղաք արքունի կառքերով եւ ուղեկցված հեծելազօրքով։ Հռչակումը կրկնեցին Royal exchange-ի առաջ լորդերի եւ օլդերմէնի ներկայութեամբ, որոնք ամբողջ զգեստաւորութեամբ էին։ Հռչակումից յետոյ ամբոխը երգում էր «God save the king», վերջացնելով երգեցողութիւնը երեք անգամ բարձրաձայն «հուռռա»-ով նոր Թագաւորի պատուին։ Թագաւորը եւ դուքսերը 11 ժ. 20 ր. գնացին Օսբորն։

ՎԻԵՆՆԱ։ Ռումինիայի մինիստր նախագահի ուղեւորութիւնը Գերմանիա եւ Աւստրիա նպատակ ունէր երրեակ դաշնակցութեան պետութիւնները նախապատրաստել Ռումինիայի եւ Բուլգարիայի մէջ տեղի ունենալիք դիւանագիտական յարաբերութիւնների խզման, Բալկանեան Թերակղզում հնարաւոր ընդհարման առաջն առնել եւ եթէ որ եւ իցէ բան պատահի, առաջուց աղատել Ռումինիան պատասխանատուութիւնից։

ՊԵԿԻՆ։ Զինատանը դիմեց պետութիւններին՝ խնդրելով ճշդութեամբ ցոյց տալ այն տեղերը, ուր պէտք է դադարեցնվեն քննութիւնները, թոյլ տալ զէնքի ներմուծումն աւազակութիւնները ճնշելու համար, աւելացնել մաքսային տուրքերը, որոշել դեսպանական թաղերի սահմանները եւ ժամանակ նշանակել զօրքերը յետ կանչելու համար։

ԼՕՆԴՕՆ։ Թագուհու մարմինը կը տեղափոխվի Օսբորնից յունվարի 19-ին. թաղումը տեղի կունենայ յունվարի 20-ին Վինձօրում։ Թագուհու կողմից յայտնված ցանկութեան համաձայն, թաղման արարողութիւնը կը կատարվի բազմաթիւ զօրքերի մասնակցութեամբ։

ՈՒՏՐԵԽՏ։ Կրիւգերի աչքերի օպերացիան կէսօրին կատարեցին պրոֆէսոր Մնելլէն եւ բժիշկ Հէյման։

12 յունվարի

ՕՍԲՕՐՆ։ Գերմանական կայսրը կը մեկնի Անգլիայից Թագուհու Թաղումից յետոյ։ Գերմանական Թագաժառանգը կը գայ յունվարի 13-ին։

ԿՕՌԻՍ։ Թագաւորի գալու ժամանակ մառախուղը, որ կանգնած էր Կոուսի վրա, ցրվեց։ Ժամի 12-ից յետոյ տեղի ունեցաւ թնդանօթաձգութիւն ի պատիւ նոր Թագաւորի։ Մինչեւ այդ ժամանակ փոքր ինչ իջեցրած դրօշակները առժամանակ բոլորովին վայր թողվեցին. բայց երբ երեւաց արքայական «Ալբերտ» դրօսանաւը, նաւահանգստում գտնվող նաւերը զարդարվեցին դրօշակներով։ Արքայական ընտանիքի ամբ դուրս գալու ժամանակ հնչեց 21 անգամ թնդանօթաձգութեան որոտը։ Դրօշակները նորից բարձրացրին մինչեւ կայմերի մէջտեղը, երբ արքայական կառքը մեկնեց նաւարանից։ Բոլոր ներկայ եղողների սրտագեղեցիկ էին։ Թագաւորը անդադար պատասխանում էր ողջունողներին։ Մի քանի րոպէից յետոյ Թագաւորը հասաւ Օսբորն։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԷԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՈՐԲՈՒՆԻ

Լոյս է տեսել ՈՐԲՈՒՆԻ կամ ԲԱՑԱՌԻԿ ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ԲԱԶՄԱՎԷՊ. ուսկից հաւաքեալ ստակն հայ որբերուն համար է։

Գինն է ֆր. 2,50=բուբլի 1։ սէնթ 50։

Դիմել. «Pazmaveb» (St. Lazare)—Venise, կամ Тифлисъ, Галусту Галустьянцу.
2—10

Բաժանորդագրութիւնը սկսվում է

„ԶԳԱՑՄՈՒՆՔ“

ՆՈՐ ՀԱՆԴԷՍԻ

(Տարեկան երկու գիրք)

Բաժանորդագինը երկու բուբլի։ Հասցէն՝ Шулаверы, Григорію Баласьянцу. «Զգացմունքը» զուտ բանաստեղծական կը լինի եւ հրաւիրում ենք բանաստեղծներին աշխատակցել։

Խմբագիր-հրատարակիչ՝
2—2 Գրիգոր Բալասեանց

ՀԱՐԿԱՒՈՐ Է

ԷԿԶԷԿՈՒՏՕՐ

Շամախու հայոց վիճակային կօնսիստորիայի համար։ Հմուտ հայոց (գրաբար) եւ ռուսաց լեզուներին։ Տարեկան ռոճիկը 600 բուբլի։ Ցանկացողները կարող են դիմել կօնսիստորիային ներկայացնելով իրանց ուսման եւ ծառայութեան վկայականները։ ԷԿԶԷԿՈՒՏՕՐԸ պէտք է կատարէ նաեւ թարգմանի պաշտօն։
3—4

ԼՈՑՍ ՏԵՍԱԻ

ԱԽԱԼՔԱԼԱՔԻ ԱՒԵՐՈՒՄԸ

18 տեսակ տեսարաններ մեծադիր թերթի վրա լուսատիպ պատկերը եւ շատ չուտով լոյս կը տեսնի Խորէն եպ. Ստեփանէի պատկերը նոյնպէս լուսատիպ. երկու պատկերները միասին ճանապարհածախսով 1 ր. 50 կ. վաճառվում են եւ Ռաֆֆու եւ Պատկանեանի մեծադիր պատկերները, որ միասին արժեն ճանապարհածախսով 1 բուբլի։

Ամեն մէկը առանձին արժէ 1 բուբլի։

Դիմել՝ Баку. Андріасу Авакову.
3—3

ՄԷՐՎԻ ԱՂՕԹԱՏԱՆ ՀԱՄԱՐ

հարկաւոր է ճեմարանը կամ մի որ եւ է թեմական դպրոց աւարտած քահանայացու, հմուտ լաւ երգեցողութեան, յաջողակ ձայնով, տարեկան 1200 բուբլուց մինչեւ 1500 ր. արդիւնքով։ Ցանկացողներից խնդրվում է դիմել եւրէցիոխ՝ լուսանկար Ստե[illegible] ոս Նազարեանցին։
5—6

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՑԻՆ ՎԱՐՁՈՒԹԻՒՆ

սրանով յայտարարում է, որ նրա գիւանատունը 1900 թւի յունվարի 25-ին, կէսօրվայ 12 ժամին նշանակված է աճուրդ՝ կապալով տալու Գօլովինսկի պրոսպէկտի վրա գտնվող քաղաքային, նախկին Շիօեվի, տան մէջ եղած խանութները եւ ներքնայարկում գտնվող սենեակները։ Աճուրդին մասնակցել ցանկացողները կարող են տեսնել պայմանագիրը վարչութեան 4-րդ բաժանմունքում բոլոր մի օրերը ժամի 9-ից մինչեւը 3-ը։
2—3

Պետերբուրգի բժշկական վարչութեան թոյլատրութեամբ։ Մեծ արկղիկը 5 բուբլի, փոքրը—3 ր. եւ 1 ր. 50 կ.։

ՆՈՐ ՄԻՋՈՑ

մաղերը բուսցնելու և ամրացնելու համար, ոչնչացնում է թեփը։ Դուրս է եկել նաև բոլորովին նոր միջոց

ԶՈՒԻ ԿԱԹԸ

երեսին քնքշութիւն և սպիտակութիւն տալու համար, ոչնչացնում է արևի պատճառած սևութիւնը, մունները, տալիս է կաշուին քնքշութիւն և սպիտակութիւն։ Այդ գները չափաւոր են. մեծ սրուակը, արկղիկի մէջ, 2 բուբլի, փոքրը—1 ր. 50 կ. Ծախվում են բոլոր պարֆիւմերական և դեղավաճառական խանութներում։ Գլխաւոր պահեստը գտնվում է Պետերբուրգում, Գուշկինսկայա փողոց տ. № 15, բնակարան № 12. պահեստի բաժանմունքները գտնվում են. Թիֆլիսում կովկասեան դեղատան ապրանքների վաճառման ընկերութեան խանութում՝ Սրճանոցի հրապարակ և նրա բաժանմունքում, Միքայէլեան փողոց և Բագում. նաև Միքայելեան կամուրջի վրա, Գայովի և Արիստակովի դեղատներում։ Օտարաքաղաքացիների պատուէրները կատարվում են անմիջապէս՝ պաստով։
40—100

Կիրակի, յունվարի 21-ին, 1901 թ.

ԹԻՖԼԻՍԻ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԻ ԴԱՀԼԻՃԱՒՄ

Կը տրվի գեղարուեստական երեկոյ

ՁԻՆԱԿԱՆ ԳԱՐԱՀԱՆԴԷՍ

Ցօգուտ Թիֆլիսի Հայոց Բարեգործական Ընկերութեան

Գարահանդէսին կը լինեն չինական պարեր՝ ազգային հագուստներով և մի աղնուական չինուհի կը բաժանէ սիւրպրիզներ և կօտիլիօնի ընծաներ։

Տիկիններին խնդրում են առնրված լինել չինական ձեւով, թող տղամարդիկ՝ ունենան չինական հագուստներ։ Զը ցանկացողները վճարում են տուգանք 50 կոպէկ։

Սկիզբն է երեկոյեան 10 ժամին։

ՄՈՒՏՔԸ Զ Ր. 10 ԿՈՊԷԿ

Նախօրօք տոմսակ ստանալ ցանկացողները կարող են դիմել իշխ. Մ. Թումանեանցին (Բարեատինսկայա, № 8)։
(չ. 23, յունվ. 5, 9, 13 եւ 18)

ՌՈՍՈՒՄՆԱՐԱՆ ԵՒ ՊԱՆՍԻՕՆ

Ա. ՏԷՐ-ՅԱԿՈՎԲԵԱՆԻ

ՈՒՆԻ ՀԻՆԳ ԴԱՍԱՐԱՆ, ՈՐՈՆՔ ՈՒՍՄԱՆ ԾՐԱԳՐՈՎ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒՄ ԵՆ ԳԻՄՆԱԶԻԱՑԻ ԵՒ ՐԷԱԼԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆՆԵՐԻ ՀԻՆԳ ԴԱՍԱՐԱՆՆԵՐԻՆ։

ԸՆԴՈՒՆՈՒՄ Է ԵՒ ՊԱՏՐԱՍՏՈՒՄ աշակերտներ գիմնազիայի, բէալական ուսումնարանի, կադետների կօրպուսի մինչեւ հինգերորդ դասարան, նոյնպէս առեւտրական, երկրաչափական եւ այլ ուսումնարանների համար։

Առաջին բաժանմունքում երեխաներ ընդունվում են առանց քննութեան։

Ուսումնարանում ուսուցանում են բարձրագոյն ուսում ստացած հմուտ մասնագէտ մանկավարժներ։

Նոյն տեղը ընդունվում են ուրիշ ուսումնարանների աշակերտներ թէ ապրելու եւ թէ դասեր ուսանելու համար։

Հասցէն՝ Թիֆլիս, Գանձակայա, № 11 (երրորդ գիմնազիայի մօտ)։
2—5

Սարգիս Վ. Աբրահամեան

Հասցէ. ՍՕԼՕԼԱԿ, Գանձակայա փող. տ. Թամամշեվի, № 26, բն. № 9.

Սովորեցնում եւ պատրաստում է երկու սեռի անձանց չորս ամսվայ ընթացքում, երաշխաւորութեամբ եւ հարկաւոր դէպքում—յանձնարարականներ տալով պարապմունքներ գտնելու համար

ՀԱՇՈՒԱՊԱՀՈՒԹԻՒՆ

1) Կրկնակի իտալական հաշուապահութիւն իր բոլոր ճիւղերով. գիւղատնտեսական, նաւթարդիւնաբերական, գործարանական, առեւտրական, բանկային եւ չոգենաւային հաշուապահութիւն։
2) Առեւտրական թուաբանութիւն.
3) Առեւտրական թղթակցութիւն։
4) Պարտաւորական օրէնքները։
5) Գեղագրութիւն, ուսումնասիրութիւն զանազանատեսակ շրիֆտների եւ ուղղումն ամենավատ ձեռքերի։

ԵՐԿՐՈՐԴ ԴԱՍԸՆԹԱՑՔԸ ՍԿՍՎԵԼՈՒ Է ՅՈՒՆՎԱՐԻ 15-ԻՑ

Կարելի է տեսնել առաւօտեան ժամի 9-ից մինչեւ 11-ը եւ 4-ից մինչեւ 7-ը երեկոյեան։
(չ. ո. չ.) 20—25

BATEAUX A VAPEUR FRANCAIS N. PAQUET ET C-ie

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱՒԱԳՆԱՑՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Ն. ՊԱԿԷ ԵՒ ԸՆԿ.

Կանոնաւոր եւ ուղղակի նաւագնացութիւն ՄԱՐՍԷԼԻՑ ԲԱԹՈՒՄ, չորեքշաբթի օրերը, երկուշաբթը մի անգամ։

Եւ հակառակը՝ Բաթումից Մարսէլ, մտնելով Տրապիզոն, Սամսուն եւ Պօ իս։ Մեկնում է Բաթումից չորեքշաբթի, 17/30 յունվարի—չոգենաւ՝ ՄԻՆԳՐԵԼԻ, կապիտան Ռ.ԵԼՏ։ եւ այսպէս շարունակաբար, երկու շաբաթը մի անգամ, չորեքշաբթի օրերը, ժամը 4-ին ճաշից յետոյ։

Բաթումից Պարիզ ուղղակի հաղորդակցութեան տոմսակներ տրվում են օտորականից պակաս դներով։

Ամիսը մի անգամ կանոնաւոր հաղորդակցութիւն Բաթումի եւ Անավէրպէնի մէջ, ընդունելով ապրանքներ բոլոր հիւսիսային նաւահանգիստների համար։

Ապրանքների եւ ճանապարհորդների մասին հարկաւոր տեղեկութիւններ ստանալու համար թող բարեհաճեն դիմել ընկերութեան գործակատարներին՝

ԲԱԹՈՒՄՈՒՄ—պ. Վիկտոր դ'Արնօքն, Նաբէրէժնայա։ ԹԻՖԼԻՍՈՒՄ—պ. Օ Գ. Բարեբաշեւ, Սիօնի փող. Խօջափարուխովի եւ Մայսուրաձէի քարվանսարա։ ԲԱԳՈՒ—եղբ. Ղենդանեանին, Սիօնի փող. Խօջափարուխովի եւ Մայսուրաձէի քարվանսարա։ ԲԱԳՈՒ—եղբ. Ղենդանեանին, Սիօնի փող. Խօջափարուխովի եւ Մայսուրաձէի քարվանսարա։ ԲԱԳՈՒ—Ա. Վ. եւ Ի. Մուրթաֆեաններին, Նաբէրէժնայա փողոց, տուն Կրասիլնիկովի, № 27։ ՆՈՎՈՐՕՍՍԻՑՍԿ—Վլադիկաւկազի երկաթուղու առեւտրական գործակալութիւն (ե. հ. չ.) 18—20

ՀԱՇՈՒԱՊԱՀՈՒԹԵԱՆ դասընթացքի XII շրջան

ՆԻԿՈՂԱՅՈՍ ԱԲՐԱՀԱՄԵԱՆ

Հեղինակ «Զեռնարկի առեւտրական և գործարանական հաշուապահութեան

ՈՒՍՈՒՑԱՆՈՒՄ ԵՒ ՊԱՏՐԱՍՏՈՒՄ Է

Երկու սեռի անձանց՝ 4 ամսվայ ընթացքում հաշուապահութիւն գործնականապէս, երաշխաւորելով, և եղած դէպքերում յանձն է առնում պաշտօնի առաջարկել։

ՊԱՐԱՊՄՈՒՆՔԻ ԱՌԱՐԿԱՆԵՐՆ ԵՆ

Ա) Կրկնակի իտալական հաշուապահութիւն ըստ ամենայն առեւտրական ճիւղերի, հանդերձ նաւթային արդիւնաբերական և կերոսինի գործարանական հաշուետեսութեան։
Բ) Առեւտրական թուաբանութիւն։
Գ) Առեւտրական նամակագրութիւն։
Դ) Առեւտրական եւ մուրհակների կանոնագրութիւն։
Ե) Գեղագրութիւն և ամենավատ ձեռքերի ուղղելը։

Պարապմունքները սկսվելու են 1901 թւի յունվարի 20-ից, ճաշից յետոյ, և պարբերաբար շարունակվելու են իւրաքանչիւր ՁՈՐՍ ամսից յետոյ։

ԻՒՐԱՔԱՆՉԻՒՐ ԿՈՒՐՍԻ ՎՃԱՐՆ Է 60 ՐՈՒԲԼԻ

Ցանկացողները թող դիմեն դրաւոր կամ անձամբ 3 ժամից մինչև 6 ժամ երեկոյեան, ԿՈՒՐԻԱ, Նիկոլաեւսկայա փողոց, սեփական տուն, № 46։ (Николаевская ул. № 46)։

Վերոյիշեալ հաշուապահութեան ձեռնարկը ծախվում է ԹԻՖԼԻՍՈՒՄ, հեղի ակի մօտ, և Ռուսաստանի բոլոր յայտնի գրավաճառանոցներում։ ԳԻՆՆ Է 3 ր. 50 կոպէկ։ Օտարաքաղաքացիները գիրքը գնելու համար կարող են դիմել հեղինակին, առանց պաստի ծախս վճարելու։
6—15

Дозволено цензурою, Тифлисъ, 12 Января 1901 г.

Типографія Грузинск. Т—ва, Большая-Ванкская ул., № 27